

## 5.2. Իրավախախտումներ

**5.2.1. Հանցագործություններ:** Ըստ ՀՀ ներքին գործերի նախարարության տեղեկատվական կենտրոնի ներկայացրած տեղեկատվության, հանրապետությունում 2000թ. հունվարին գրանցվել է 609 հանցագործության դեպք կամ 27.1%-ով ավել, քան 1999թ. նույն ժամանակահատվածում: Ընդ որում, գրանցված հանցագործությունների 54.8%-ը՝ քրեական հետախուզության գծով, 7.1 %-ը՝ տնտեսական ոլորտում կատարված և 38.1%-ը՝ այլ բնույթի հանցագործություններ են:

Քրեական հետախուզության գծով գրանցված ծանր հանցագործության դեպքերի 19.4%-ը ծանր մարմնական վնասվածքներ են, որոնք նախորդ տարվա հունվարի համեմատ ավելացել են 6.5 անգամ: Նույն ժամանակահատվածի համեմատ մարմնական վնասվածքների դեպքերն ավելացել են 1.5 անգամ, իսկ դիտավորյալ սպանության և սպանության փորձի դեպքերը նվազել են համապատասխանաբար՝ 28.6 և 33.3 տոկոսային կետերով:

1999թ. հունվարին գրանցված հանցագործությունների կազմում 28.9% կազմած անձնական գույքի հափշտակության դեպքերը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել են 18.1%-ով, ընդ որում անձնական գույքի հափշտակության իրականացումը գողությամբ՝ 26.7%-ով, խարդախության միջոցով՝ 11.8% – ով, իսկ կողոպուտի և ավազակության միջոցով նվազել են համապատասխանաբար՝ 16.7 և 50.0 տոկոսային կետերով: Բնակարանային գողությունները, որոնք անձնական գույքի գողությունների մեջ կազմել են 25.9%, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել են 9.5 %-ով:

1999թ. հունվարի համեմատ արձանագրվել են պետական կամ հանրային գույքի հափշտակության դեպքերի նվազում 46.4%–ով, այդ թվում՝ գողության միջոցով 42.3%–ով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ 2000 թ. հունվարին 13.6%–ով նվազել են թմրամոլության և թմրամոլության հետ կապված հանցագործությունները և կազմել 19 դեպք: Արձանագրվել է ապօրինի կերպով զենք, զինամթերք կրելու, պահելու, պատրաստելու, ձեռք բերելու կամ վաճառելու հետ կապված հանցագործությունների 8 դեպք, որը 1999թ. հունվարի համեմատ նվազել է 3–ով կամ 27.3%-ով:

1999թ. նույն ժամանակահատվածի համեմատ 43.3 %-ով ավելացել են տնտեսական ոլորտում կատարված հանցագործությունները և կազմել 43 դեպք: Յուրացնելու, վատնելու կամ պաշտոնեական դիրքի չարաշահման միջոցով արձանագրված պետական գույքի հափշտակման 15 դեպքից (1999թ. հունվարի 10–ի դիմաց) 40.0%-ը (1999թ. հունվարի 60.0 %-ի դիմաց) խոշոր չափերի հասնող հափշտակություններ են:

Ըստ մարզերի, հանցագործության դեպքերի առավելագույն աճ արձանագրվել է Տավուշի և Շիրակի մարզերում, համապատասխանաբար՝ 1.9 և 1.8 անգամ: